Արձանագրություն N 2

Երևանի Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնի դահլիճի բեմական լուսային և ձայնային համակարգերի վերազինման, անվտանգության և տեսանկարահանման ու ցուցադրման համակարգերի ձեռքբերման և տեղադրման, ինչպես նաև դահլիճի և ամֆիթատրոնի բազկաթոռների նորացման աշխատանքների ձեռքբերման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Սարգսյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Գյուրջյան, Կ. Ղազարյան, Լ. Բաբայան, Գ. Օրբելյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ի. Եղիազարյան

1. Տեղեկություններ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/77» ծածկագրով գնման ընթացակարգին հայտերի բացման մասին

(Գ. Սարգսյան)

Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2019 թվականի հոկտեմբերի 2-ին, ժամը 11:00-ին, Երևանի քաղաքապետարան, ք. Երևան Արգիշտի 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

2. «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/77» ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

(Գ. Սարգսյան)

Գնման ընթացակարգին հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

h/h	Մասնակիցների անվանումները
1	**Բրիդջ ՍՊԸ**
2	**ԲԱՋԱԼՏՇԻՆ ԱԿ**

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

3. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

(Գ. Սարգսյան)

3.1 Ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Նախահաշվային գներ	Մասնակիցների անվանումը	
			Բրիդջ ՍՊԸ	ԲԱՋԱԼՏՇԻՆ ԱԿ

	Մշակույթի վարչություն	ԵՔ- ԲՄԱՇՁԲ -19/77		
1	Երևանի Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնի դահլիճի բեմական լուսային և ձայնային համակարգերի վերազինման, անվտանգության և տեսանկարահանման ու ցուցադրման համակարգերի ձեռքբերման և տեղադրման, ինչպես նաև դահլիճի և ամֆիթատրոնի բազկաթոռների նորացման աշխատանքներ	74833120	72800000	62111472

4. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Գ. Սարգսյան)

4.1 «Բրիդջ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, իսկ «ԲԱՋԱԼՏՇԻՆ» ԱԿ-ի ներկայացված հայտում բացակայում է հրավերով պահանջվող հայտի ապահովումը:

Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 41-րդ կետի դրույթով՝ որոշեց մերժել «ԲԱՋԱԼՏՇԻՆ» ԱԿ -ի կողմից ներկայացված հայտը,

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

5. Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակցի մասին

(Գ. Սարգսյան)

5.1 Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «**ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/77**» ծածկագրով գնման ընթացակարգի՝

-1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Բրիդջ» ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5,դեմ - 0:

6. ՀՀ պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

(Գ. Սարգսյան)

6.1 Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների և <<Ֆինանսական միջոցներ>>

որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ պետական եկամուտների կոմիտե:

6.2 Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը՝ Ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Հրավերով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

7. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Գ. Սարգսյան)

7.1 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի որակավորումը հավաստող փաստաթղթերը գնահատելու նպատակով՝ գնահատող հանձնաժողովի նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման փաստաթղթերը ներկայացնելու և ՀՀ պետական եկամուտների կոմիտից հարցումը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ժամը 10:00-ին, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Արգիշտիի փողոց 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի Նախագահ՝		Գ. Սարգսյան
Անդամներ՝		Ա. Գյուրջյան
		Կ. Ղազարյան
		Լ. Բաբայան
		Գ. Օրբելյան
Քարտուղար՝		Ի. Եղիազարյան